

ԽԱՆԻՊԵԱՆ ԻՇԽԱՆԻ

ՀԱՅՈՅ ԱԶԳԻՆ ԱՐԱԾ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆԸ.

(Նարայարութիւն.)

Անցեալ անգամ խօսեցանք ցաւելով՝ թէ մեր ազգին մէջ շատերը չգիտեն բարերարութեան գինը. այն խօսքերուս ապացոյց բերինք Խալիպեան իշխանին անմահական գործերը, եւ անոր փոխարէն՝ նորա քաղաքակիցներէն ոմանց ապերախտութիւնը: Յիրաւի զարմանալի՝ գործ. ո՞րքան պէտք է լինի մարդուս սիրտը անզգայ, կոշտ եւ ազնուութենէ զուրկ, որ ականատես լինելով այսպիսի գործերուն՝ չցատքեցնէ իւր սրտէն գոնէ քանի մի շնորհակալութեան կայծեր:

Ընթերցողը կարող է կարծել՝ թէ դժուար է գտանել այնպիսի անզգայ եւ կոշտ սրտեր մեր ազգին մէջ. բայց ես կհաստատեմ՝ որ շատ եւ շատ կարելի է գտանել մեր ազգին մէջ այնպիսի անզգայ եւ ցած սրտեր, որոնք շնորհակալութեան փոխանակ՝ այսպէս կխօսին իշխանին գործերուն վերայ. «Մե՛ծ բան արաւ. ես ալ ուզենայի կանէի «ամա, չարի իշթէ. սանքի տարա արածը ի՞նչ ա- «ղէկութիւն է. մէկ ալայ մը լօթեռներ, գէվգէկ- «ներ դուրս պիտ'հանէ վարժատունէն. հոս (նա- «խիջեւան) պիտ'գան, մեզ հաւնելու չին, աղջիկ- «ներուս առկէ պիտ'հանին. Տանըմ, աղէկ պա- «ներ չին. քանի կերթանք՝ գեշին կերթանք. «ի՛նչ անինք, զահիր մեղքերս է տահա»:

Ահա այսպէս եւ այսօրինակ կդատեն տասն- եւիններորդ դարուս մէջ նոր-նախիջեւանի բը- նակիչներէն շատերը (*). ահա այսպէս եւ այս- օրինակ կխօսին վարժատուներու եւ ուսման վերայ. ահա այսպէս եւ այսօրինակ կգնահատեն Խալիպեան իշխանին մեծահռչակ բարերարու- թիւնը: Ո՛վ նախիջեւանեցիք, եթէ ուսումն չէք սիրեր, ի՞նչ բան ուրեմն առաւել կծիրէք աշ- խարհիս վերայ: Կարծեմ ոսկին, արծաթը: Ի՞նչ- պէս կվաստելիք այդ ոսկին, արծաթը. կարծեմ, ըստ մեծի մասին, առեւտրով: Ի՞նչպէս կկար-

ծէք, կարո՞ղ էր ծաղկիլ առուտուրը աշխարհիս վերայ առանց ուսման: Ի՞նչպէս կկարծէք, կա- րո՞ղ էիք առանց ուսման կառուցանել այդպիսի հոյակապ տուններ, այդպիսի հագուստներով ձեր կանայքը զարդարել. ի՞նչպէս կկարծէք, կարո՞ղ էիք առանց ուսման կառքերով շրջիլ քաղաքէ քաղաք, եւ շոգենաւերով՝ ծովէ ծով. ի՞նչպէս կկարծէք, կարո՞ղ էիք շոգեկառքով տասը ժամի միջոց երեքհարիւր վերսիւ աւելի վազել՝ առանց ուսման: Ո՛ւր տեղ եւ գնաք՝ առաջներդ ուսումն է. բայց ձեր աչքին չե՛րեւնար այդ ուսումը, ո- րովհետեւ նա ամէն բան պատրաստեր է ձեզի համար եւ դուք պատրաստը կվայելէք: Ձեզմէն շատերը կդատին. «ես հանա ուսեալ չիմ ամա «մէկ ալայ մը օղուլուշախ կը պահիմ, եւ փառք «Աստուծոյ՝ մէկինմէն ալ պակաս չիմ. եթէ զա- «ւակներս ալ ինծի պէս ըլլան նէ՛ շնորհակալ «իմ տէրոջմէս»: Եղբարք, ո՞վ ձեզ ասեր է որ միայն ուսեալը կրնայ պահել իւր օղորտշախը, եւ ուսումն չառնողները քաղցած պիտի մեռնին: Երկրորդ՝ մի՛թէ մարդս կապրուի այդ մէ՛կ նպա- տակին համար՝ որ իւր օղորտշախը կերակրէ. եւ եթէ այդ նպատակին հասնի, միանգամայն բաղդաւոր է, եւ կատարած կլինի աշխարհիս վերայ բոլոր մարդկային պարտաւորութիւնները: Մի՛թէ մարդուս բնութիւնը ստեղծուեր է միայն ուսելու՞ եւ ուրիշներուն ուսեցնելու՞ համար. եթէ այդ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն բնութիւնը զմարդ զատեր է անբաններէն՝ բանականութիւն տալով նորա. ինչո՞ւ նորա միտք եւ դատողու- թիւն պարգեւեր է: Ուրեմն բնութիւնը խորհուրդ մը ունեցեր է մարդուս ստեղծած ժամանակը, տալով նորա այն երկնային ձիրքը՝ որ նա, ու- տելէն խմելէն իզատ՝ ունենայ եւ ուրիշ սեպհա- կան յատկութիւն մը: Այդ սեպհական յատկու- թիւնը, որ է բանականութիւն, բաւական չհամա- րիր ձեզ նման՝ միայն օղորտշախ կերակրել, մը- տածելով թէ կովն եւս կկերակրէ իւր որթը, Թռչունը իւր ձագը: Այդ բնական պահանջմունք է. այդ տեղ չկայ ո՛չ բարերարութիւն, ո՛չ մե-

(*) Շատերը կասեմ, որովհետեւ կան եւ այնպիսի ան- ձիւք՝ որոնք չվերաբերիր իմ խօսքս. այն անձիւքը, որ կզգան իւրեանց արժանաւորութիւնը՝ չեն մնար անբաւա- կան ինձմէ. բայց անարժանքը բոլոր անիծեն, հոգս չէ:

ծափողութիւն, ուրեմն եւ ո՛չ մարդավայել ար-
ժանաւորութիւն: Բայց բանականութիւնը՝ դա-
տելով կանէ այնպիսի գործ՝ որ սեպհական
վայելչութիւն է մարդոյ, այնպիսի գործ՝ որ հե-
տեւանք է նորա առողջ դատողութեանը. զոր օ-
րինակ օգնութիւն կանէ կարօտելոց, կաշխատի
հասարակաց բարւոյն համար, եւ այլն:

Ինչպէս որ ամենայն բան ունի ստուեր (շուք),
այնպէս ալ ամենայն մարդ ունի բանականութիւն.
բայց ստուերը այն ժամանակ կտեսնուի՝ երբ այն
բանը կամ առարկան լուսաւորուած լինի. նոյն-
պէս մարդս երբ ուսումն առնուի՝ կլուսաւորուի,
այսինքն նորա բանականութիւնը կզարթի, դուրս
կցատքէ. ինչպէս որ արեւ ծագելու ժամանակ
կյայտնուի տան կամ ուրիշ առարկաներու ըս-
տուերը: Այսպէս եւս, ցաւելով պէտք է խոստո-
վանիմք, ձեր բանականութիւնը թմրած, քնացած
է ձեր գլխուն վէջը, եւ ուսման արեւը պէտք է
զարթեցնէ զինքն որ *ողորջախ* կերակրելէն զատ
սկսիք մտածել եւ դատել բանականութեան օ-
րէնքներովը, եւ լինիք մէկ օր մը Հայ ազգին
գործունեայ եւ ազնիւ որդիք...

Այժմ կտեսնեմ որ դուք եւս համաձայն էք
ինձ հետ՝ թէ ուսումն ամենահարկաւոր բան է
մարդոյ համար, եւ շատ անշնորհակալ կլինիք՝
եթէ զաւակներդ ալ ձեզի նման անուսումն եւ
կոպիտ մնան: Եթէ ուսումն այդքան թանկագին
եւ ամենահարկաւոր բան է մարդուս համար,
ուրեմն ո՞րքան թանկագին պէտք է լինին այն
մարդիկը՝ որոնք ուսման համար չեն խնայեր
ո՛չ արծաթը եւ ոչ ոսկին, որոնք ուսման համար
կմատուցանեն մեծ զոհեր, կշինեն հոյակապ ճե-
մարաններ: Այդպիսի մարդիկը պէտք է սիրել
իբրոր սրտէ, պատուել բոլոր հոգւով, վասն զի
նոցա բարերարութիւնը ո՛չ չափ ունի եւ ոչ գին:

Ուրեմն, ո՛վ նախիջեւանեցիք, ո՞րքան բաղ-
դաւոր պիտի համարիք զձեզ, որ ձեր մէջէն ելաւ
այնպիսի մարդ՝ որ իւր անմահ գործովը պատիւ
բերաւ ձեզ եւ ձեր քաղաքին: Նախիջեւանի շի-
նութենէն հետէ ունեցե՞ր էիք ձեր քաղաքին
մէջ Խալիպեան Իշխանին նման մարդ, որ իւր
անձնական շահը մէկ կողմի դնելով, որ չդողդը-
ղալով ձեզ նման մէկ փտտած քոփէքի վրայ, կէս

միլիոն զոհէ իւր ազգին համար. ունեցե՞ր էիք
այնպիսի մարդ՝ որ ձեզ նման «ես սուրբ իմ, ես
«արդար իմ, ես տասնմէկ հատ աղջիկ կար-
«գիլիմ» չասած, ցոյց տայ իւր բարերարութիւնը
համեստաբար գործով. ունեցե՞ր էիք այնպիսի
մարդ՝ որ ուսման յարգը եւ մեծութիւնը Յանա-
չելով՝ հոսէ առատաբար յօգուտ ազգին այն ոս-
կին՝ որուն համար դուք հոգի կուտաք. ունե-
ցե՞ր էիք այդպիսի մարդ ձեր քաղաքին մէջը՝ որ
ստանայ փառք անմահական եւ լինի անաղօտ
լոյս եւ պարծանք Հայրենեաց:

Բայց դուք՝ երբ տեղը գայ՝ մէկ մանէթ (բուպ-
լի) փողը հայհոյանքով, կռիւով կուտաք հասա-
րակաց բարւոյն համար, եւ մարդ չմնար քա-
ղաքին մէջը՝ որ անոր չպատմէր. «Հածէ աս
«ի՛նչպէս բան է. աղքատի տո՞ւն պիտ'խորդին
«ինչ է. աս կէնէ էկան վըրաս, հանեցի մէկ
«հատիկ ճերմակ սուռաթնեւուն Ֆուլթմիշ
«արի»: Ահա այսպէս չնչին զոհերը կփոխեն
ձեր երեսին գոյնը, կվըրովեն ձեր արծաթասէր
սիրտը: Ի՛նչ պէտք էր անէիք՝ երբ ստիպուած
լինէիք հազարներ զոհելու ազգին համար. այն
ժամանակը կարելի է կգիտնայիք ազգասէր եւ
բարերար մարդոց գինը. այն ժամանակը կը-
տեսնէիք՝ ո՞րչափ դժուար բան է ոսկին ու
արծաթը հանել իւր մտուկէն եւ զոհել. այն
ժամանակը կհասկանայիք Խալիպեան Իշխանին
ճշմարիտ ազգասիրութիւնը:

Բայց այժմ ձեզ գրուած չէ հասկանալ այդ
բարերարին մեծութիւնը. միայն ձեր յետինքը
որդւոց որդի պիտի փառաբանեն նորա անունը:

Ո՛վ նախիջեւանեցիք, բացէ՛ք փակուած աչ-
քերդ, դարձուցէք դէպի հարաւ, տեսէք այն լայն-
արծակ հորիզոնը՝ ուր կփայլի Յաճախագեղ Խա-
լիպեան աստղը. կարելի է մէկ նշոյլ կարճակէ ձեր
խաւար միտքերուն վերայ, կարելի է իւր ջեր-
մութիւնովը կտաքցնէ ձեր սառած սրտերը...

Հասկացէ՛ք բաջապէս, որ այդ աստղը պէտք
է լինի ձեր բաղդը եւ ձեր ապագայ փառքը:

(Աւարտն ուրիշ անգամ.)

Ի 20 Յունիսի, 1863.

Ի Նոր-Նոխիջեւան:

Բժիշկ, ԱԼԵԳՍ. ՇԼՅԵԱՆԵ.

